

ուր Ս. Կուսի Գերեզմանի եկեղեցին, փաստ մը որ կ'ապացուցանէ յիշատակարանի հինգերորդ դարու գործ մը ըլլալը ու այն եկեղեցին շինութեան հինգերորդ դարու կիսուն կատարուած ըլլալը: Յիշատակարանիս նշանակած այս շէնքը բնականաբար կործանուած է Պարսից յարձակումներու ժամանակ: 723ին Willibald ուխտաւորը կը գրէ թէ «տեսած է մեծ սիւն մը՝ որ իր վերայ կը կրէր խաչ մը և ցոյց կու տար ա՛յն տեղը ուր Հրէայք ուզեցին յափշտակել Ս. Կուսին մարմինը» (Տե՛ս Nouveau Guide de Terre Sainte, էջ 115): Այս սիւնը կը մնար այն ճամբուն վրայ որ կ'երկարէր Ս. Կուսի տունէն մինչև Գեթսեմանիի պարտէզը և յիշատակ մըն էր պատահած դէպքին:

Ս. Աստուածածնի տանը մասին մեր Երուսաղիմացի Յովհաննէս եպօ. (Հաննէ, \* 1733) իր Պատմ. Երուսաղիմի գործին մէջ (էջ 250) կը գրէ. «Ասի (Գերսեմսի) ի վայր դիպ յարեւելս գոյ արձ մի, եւ ի ծայր ակիեան արժիև գոյր սիւն մի նշանագրեալ յաղագս հրաշից եւ այժմ աներեալ եւ ուր հանդիպեցան Հրեայքն». այս տողերն ալ կը հաստատեն վերոգրեալ յիշատակարանը, որ այժմ անյայտ է:

Գեթսեմանիի եկեղեցին հայկական յիշատակարանաց կարգին կարելի է դասել Չեռագիր Յայնաւորի մէկ հատուածը (Տաշեան Յուցակ, էջ 566), ուր կը կարդանք. «Մեծի եւ փառաւորեալ ննչնան անկաւրհնեալ սուրբ Կուսիև Մարիամու Ասուածածնիև: Պատր եւ արժան ե զիսեղ գրեալ զսխնչեղիսն՝ որ եղև ի նրնջունև անկասարբունոյ Ասուածածնի, գոր գրեալ Յովհաննէս առաքեալ եւ առկարակիցև, եւ հերանաւոյ հերեկիոսի սցարիցիև»: Այս ձեռագիրը, որ 1591 ին ընդօրինակուած է Յովհաննէս գրչին ձեռքով Առաքել եպօ.ին համար և տեղը յայտնի չէ, ունի հետաքրքրական ներածութիւն մը, որուն մէջ կը կարդանք. «Ձոր սուրբ Հարք և կաթողիկէ եկեղեցի զխարգախութիւնն (— այլալեալ ննջումը —) անփոյթ արարին, և որպէս ճշմարիտ լեալ ընդունէին և ընթեռուին: Եւ յետ ժամանակաց սրբասնեալ եպիսկոպոսապետն Թեսաղոնիկոյ գնաց յերուսաղէմ, և մըտեալ ի Գեթսեմանի՝ եզիս ի վաղջոց ժանկանիսց ի գիրս նշանագրոյ ըզպատմութիւն ննչնան ամենասրբունջոյ Աստուածածնին...»: Ներածութեան մէջ յիշուած Թեսաղոնիկոյ եպիսկոպոսապետին անունը չի յիշուիր ո՛չ թարգմանչին և ո՛չ ալ ընդօրինակողին կող-